ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 488 - Ա 27 սեպտեմբերի 2021 թ.

ԱՐԱՄ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ «ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 71-րդ կետը և «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 4 որոշումն ու եզրակացությունն, ինչպես նաև Արամ Նիկողոսյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. 2021 թվականի սեպտեմբերի 27-ից Արամ Նիկողոսյանին նշանակել «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 3 տարի ժամկետով:

27.09.2021

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՄԱՐԶՊԵՏ՝

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ